Փոխկապակցման և անձնական տվյալների փոխանցման
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No _____

ք. Երևան «___»_____ _____
օր/ամիս/տարի

Սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքվում է հետևյալ կողմերի միջև.
«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ (այսուհետ՝ **Օպերատոր**)

Պետ. գրանցման վկայականի համարը՝	**03Ա173877**
Պետ. գրանցման վկայականի տրման ամսաթիվը՝	15.06.2011
Իրավաբանական հասցե՝	**ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1**
Գործունեության հասցե՝	**ՀՀ, 0010 Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ**
Ի դեմս՝	**տնօրեն Արթուր Խաչատուրյանի**
Կոնտակտային էլ. փոստի հասցե՝	info@ekeng.am

մի կողմից, և

_____(այսուհետ՝ **Օգտագործող**)
[պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը]

Պետ. գրանցման վկայականի համարը	
Պետ. գրանցման վկայականի տրման ամսաթիվը	
Իրավաբանական հասցե	
Գործունեության հասցե	
Ի դեմս /*նշել պաշտոնը և անունը*/	
Պատասխանատու անձի էլ. փոստի հասցեն	
Պատասխանատու անձի հեռախոսահամարը	

համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ **Կողմեր**:

Պայմանագիրը կնքվում է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշումը, որի համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, հանդիսանալով ՀՀ պետական տեղեկատվական համակարգի տեխնիկական սպասարկումը և համակարգումն իրականացնող օպերատոր, իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների բազաների փոխկապակցումը և ապահովում է անձնական տվյալների փոխանակումը՝ կիրառելով իր կողմից շահագործվող իսկորոշման համակարգը:

1. Պայմանագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Օգտագործողի ներկայացրած և Օպերատորի հաստատած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող տվյալների բազային փոխկապակցման և անձնական տվյալների փոխանցման հայտը (այսուհետ՝ Հայտ), Օպերատորն ապահովում է

Օգտագործողի էլեկտրոնային համակարգի տեխնիկական միացումը Օգտագործողի Հայտով սահմանված տվյալների բազային՝ տրամադրելով անհրաժեշտ տեխնիկական տվյալները, և ապահովում է իր իսկորոշման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով տվյալների բազայից անձնական տվյալներ ստանալու հնարավորություն:

1.2 Սույն Պայմանագիրը վերաբերում է ինչպես Պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացած Հայտին, այնպես էլ Պայմանագրի կնքումից հետո Օգտագործողի ներկայացրած և Օպերատորի հաստատած լրացուցիչ հայտերին (եթե առկա են), և տարածվում է դրանցով սահմանված տվյալների բազաներից անձնական տվյալների փոխանցման հարաբերությունների վրա:

2. **Փոխկապակցման և տվյալների փոխանցման կարգ**

2.1. Հայտով սահմանված տվյալների բազայից անձնական տվյալներ ստանալու համար Օպերատորը Օգտագործողին տալիս է տվյալների բազային միանալու և հարցում կատարելու համար անհրաժեշտ ծրագրավորման կիրառական ինտերֆեյս (API):

2.2. Օգտագործողն է իրականացնում ծրագրավորման կիրառական ինտերֆեյսի (API) ինտեգրումն իր էլեկտրոնային համակարգին: Օպերատորը Օգտագործողին ցուցաբերում է աջակցություն, սակայն պատասխանատվություն չի կրում ինտեգրման համար:

2.3. Ինտեգրումից հետո Օգտագործողը կարող է կատարել անձնական տվյալների հարցումներ:

2.4. Հարցումները կատարվում են՝ որպես մուտքային տվյալ ներմուծելով տվյալների սուբյեկտի անձնագրի սերիան և համարը կամ հանրային ծառայությունների համարանիշը, եթե Օպերատորը հարցումներ կատարելու այլ հնարավորություն չի ապահովում:

2.5. Ամեն անգամ հարցում կատարելիս Օգտագործողը նույնականացվում է, և մուտքային գործողությունները հաշվառվում (լոգավորվում) են էլեկտրոնային գրանցամատյանում:

2.6. Օգտագործողը պարտավոր է բավարարել և պահպանել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված անվտանգության և տեխնիկական նվազագույն պահանջները և դրանց լրացումները, որոնք Օպերատորը կարող է հետագայում կատարել՝ նախապես ծանուցելով Օգտագործողին:

2.7. Իսկորոշման Համակարգի և Օգտագործողին տրված ծրագրավորման կիրառական ինտերֆեյսի նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները պատկանում են Օպերատորին: Օգտագործողն իրավունք ունի Համակարգից և ծրագրավորման կիրառական ինտերֆեյսից օգտվել՝ սույն Պայմանագրով նախատեսված նպատակով: Օգտագործողն իրավունք չունի այլ անձանց փոխանցել իրեն տրված ծրագրավորման կիրառական ինտերֆեյսը և/կամ տալ Համակարգից օգտվելու թույլտվություն և/կամ հնարավորություն:

2.8. Օգտագործողն իրավունք ունի Օպերատորից ստանալ Համակարգից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

2.9. Սույն պայմանագրով նախատեսված անձնական տվյալներն Օգտագործողին փոխանցվում են անհատույց՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշման:

3. **Անձնական տվյալների պաշտպանություն և պատասխանատվություն**

3.1. Հայտով սահմանված տվյալների բազային միացման և հարցումների կատարման արդյունքում Օգտագործողին հայտնի են դառնում անձնական տվյալներ, և Օգտագործողը դառնում է անձնական տվյալներ օգտագործող և/կամ մշակող: Որպես այդպիսին՝ Օգտագործողը պարտավորվում է իրեն հայտնի դարձող անձնական տվյալների առնչությամբ պահպանել անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները, այդ թվում, առանց սահմանափակման, հարցում ուղարկելուց առաջ և անձնական տվյալները մշակելու համար ստանալ համապատասխան տվյալների սուբյեկտի համաձայնությունը, եթե դա պահանջվում է օրենքով:

3.2. Օգտագործողը պարտավոր է իր աշխատողներին պարտավորեցնել պահպանել անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության պահանջները, այդ թվում, առանց սահմանափակման, չհայցել, չօգտագործել և չմշակել այնպիսի անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու և օգտագործելու նպատակի համար, Հայտով հայտարարվածից տարբերվող

նպատակներով չօգտագործել և երրորդ անձանց չփոխանցել իրենց հայտնի դարձած անձնական տվյալները:
3.3. Անկախ Հայտի բավարարման և Պայմանագրի կնքման հանգամանքից, Օգտագործողն է պատասխանատու Պայմանագրի ներքո անձնական տվյալների ցանկացած հարցման և որևէ եղանակով մշակման օրինականության և համաչափության համար, այդ թվում, առանց սահմանափակման, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տվյալների սուբյեկտի համաձայնության ստացման համար:
3.4. Պայմանագրի գործողության ընթացքում Օգտագործողը պարտավորվում է Օպերատորի կամ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի պահանջով ներկայացնել անձնական տվյալների մշակման օրինականությունը և համաչափությունը հավաստող ապացույցներ, այդ թվում, առանց սահմանափակման, համապատասխան տվյալների սուբյեկտի համաձայնությունը, եթե այդպիսին պահանջվում է օրենքով:
3.5. Իր նույնականացման տվյալներով (Հավելված 1-ում նշված ինտերնետ հասցեներ և ծածկագրեր) կատարված բոլոր հարցումների և դրանց հիման վրա անձնական տվյալներ ստանալու և դրանց հետագա մշակման օրինականության և համաչափության համար ամբողջ պատասխանատվությունը կրում է Օգտագործողը:
3.6. Օպերատորը պատասխանատու չէ հարցումների արդյունքում ստացված անձնական տվյալների ճշգրտության և ամբողջության համար. անձնական տվյալները վերցվում են երրորդ մարմինների տվյալների բազաներից:
3.7. Սույն՝ 4-րդ գլխի խախտման կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու դեպքում, Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ անմիջապես կասեցնել Օգտագործողի միացումը տվյալների բազային և դիմել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին՝ ստուգելու Օգտագործողի կողմից անձնական տվյալների մշակման համապատասխանությունն անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը: Այդ նպատակով Օպերատորն իրավունք ունի Օգտագործողից պահանջել ներկայացնել անձնական տվյալների ստացման օրինականությունն ապացուցող փաստեր, այդ թվում՝ տվյալների սուբյեկտի համաձայնությունը, եթե այդպիսին պահանջվում է օրենքով: Օպերատորն առաջնորդվում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի որոշումներով:
3.8. Հավելված 1-ով սահմանված անվտանգության և տեխնիկական պահանջների ցանկացած խախտման դեպքում Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ անմիջապես կասեցնել Օգտագործողի միացումը Համակարգին՝ մինչև խախտումը վերացնելու մասին ապացույցների ներկայացումը, ինչպես նաև խախտման վերաբերյալ ծանուցել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին: Այդ դեպքում Օպերատորն առաջնորդվում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի որոշումներով:

4. **Պայմանագրի ժամկետ և լուծում**

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման օրից և գործում է անժամկետ:
4.2. Օգտագործողն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ նախապես ծանուցելով Օպերատորին: Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորը դադարեցնում է Օգտագործողի միացումը Օգտագործողի հայտերով նախատեսված տվյալների բազաներին: Հետագայում անձնական տվյալների փոխանցման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Օգտագործողը պարտավոր է Օպերատորին ներկայացնել նոր հայտ, որը բավարարվում կամ մերժվում է սկզբնական Հայտի համար նախատեսված կարգով:

5. **Այլ պայմաններ**

5.1. Օգտագործողի Հայտը և հետագայում ներկայացվող հայտերը կցվում են սույն պայմանագրին և համարվում են դրա անբաժանելի մասը:
5.2. Օպերատորն իրավունք ունի անհրաժեշտությունից ելնելով, նախնական ծանուցմամբ Պայմանագրում, այդ թվում՝ անվտանգության և տեխնիկական նվազագույն պահանջներում, կատարել փոփոխություններ և լրացումներ: Նշված ծանուցումները կցվում են Պայմանագրին, և դրանցով

սահմանված ժամկետում Պայմանագիրը համարվում է համապատասխանաբար փոփոխված և/կամ լրացված:

5.3. Պայմանագրի ներքո ծանուցումները պետք է հանձնվեն առձեռն կամ ուղարկվեն գրավոր կամ էլեկտրոնային նամակով (հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ)՝ Պայմանագրում նշված հասցեներով: Օպերատորն էլեկտրոնային ծանուցումներն ուղարկում է Օգտագործողի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեով:

5.4. Օգտագործողը պարտավոր է իր պատասխանատու անձի կամ նրա կապի միջոցների փոփոխման դեպքում հնարավորինս շուտ ծանուցել Օպերատորին: Նոր պատասխանատու անձի մասին Օպերատորին չծանուցելու դեպքում, նախկին պատասխանատու անձի կապի միջոցներով ուղարկված ծանուցումները կհամարվեն պատշաճ կարգով ուղարկված:

5.5. Պայմանագրով չկարգավորված մասով փոխկապակցման և անձնական տվյալների փոխանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն և 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշումներով:

5.6. Պայմանագիրը կնքվում է երկու բնօրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրի համար:

ՕՊԵՐԱՏՈՐ	ՕԳՏԱԳՈՐԾՈՂ
Տնօրեն Արթուր Խաչատուրյան	

Հավելված 1
Փոխկապակցման և անձնական տվյալների փոխանցման
No _____ **պայմանագրի**

Անվտանգության և տեխնիկական նվազագույն պահանջներ

1. Իսկորոշման Համակարգի միջոցով հարցումները կարող են կատարվել միայն հետևյալ ինտերնետ հասցեներից, որոնք կարող են փոփոխվել կամ լրացվել Օգտագործողի՝ առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ուղարկած ծանուցման հիման վրա՝
IP Address-ներ՝

2. Հարցումներ կատարելու համար Օգտագործողին տրվում են ծածկագրեր (hashcode և token), որոնք Օպերատորը Պայմանագրի կնքումից հետո ուղարկում է Օգտագործողի պատասխանատու անձի՝ սույն պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Օգտագործողը պարտավոր է պահպանել և իր պատասխանատու անձին և լիազորված աշխատողներին պարտավորեցնել պահպանել ծածկագրերի գաղտնիությունը:
3. Ծածկագրերը Օգտագործողի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեին հասանելիություն ունեցող չլիազորված անձանց հայտնի դառնալու դեպքում ամբողջ պատասխանատվությունը կրում է Օգտագործողը:
4. Օգտագործողն է պատասխանատու իր ամրագրված ինտերնետ հասցեներից և իրեն տրամադրված ծածկագրերի կիրառմամբ կատարված բոլոր հարցումների, այդ թվում՝ սույն հավելվածի խախտմամբ ծածկագրերը չլիազորված անձանց հայտնի դառնալու արդյունքում կատարված հարցումների համար, ինչպես նաև իր աշխատողների և լիազորած անձանց գործողությունների և անգործության համար:
5. Հարցումները պետք է կատարվեն՝ օգտագործելով հիպերտեքստի փոխանակման անվտանգ պրոտոկոլ (HTTPS), պաշտպանված սոկետների մակարդակով (SSL/TLS) գաղտնագրման ալգորիթմներ, առկայության դեպքում՝ վիրտուալ մասնավոր ցանցի (VPN) առանձնացված կապուղով՝ կիրառելով սիմետրից բանալիների (symmetric keys) փոխանակման մեթոդը:
6. Օգտագործողը պարտավոր է պահպանել անձնական տվյալների մշակման համար գործածվող տեխնիկական միջոցների անվտանգությունը, պաշտպանել դրանք անօրինական մուտքից և սահմանափակել դրանց հասանելիությունը չլիազորված անձանց:
7. Իսկորոշման Համակարգի կամ այլ անձանց տեղեկատվական համակարգերի անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում, ինչպես նաև հրատապ չպլանավորված սպասարկման աշխատանքների անհրաժեշտության դեպքում Օպերատորը կարող է կասեցնել Օգտագործողի միացումը Համակարգին՝ նրան ուղարկելով համապատասխան ծանուցում: Միացումը կվերականգնվի հնարավորինս շուտ:
8. Օգտագործողը պարտավոր է ապահովել իր սարքավորումների, համակարգերի և համակարգչային ծրագրերի անվտանգությունը և պատասխանատվություն է կրում Համակարգի ոչ պատշաճ օգտագործման կամ չարաշահման համար:
9. Օգտագործողը պարտավոր է զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք վնասում են կամ կարող են վնասել Համակարգը կամ Օպերատորի կամ երրորդ անձանց սարքավորումները, համակարգերը կամ համակարգչային ծրագրերը կամ ուղղված են դրանք ապօրինի մուտք գործելուն կամ անձնական տվյալներին չթույլատրված հասանելիություն ստանալուն կամ խախտում են այլոց իրավունքները:

ՕՊԵՐԱՏՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ

Տնօրեն
Արթուր Խաչատուրյան